Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի տնօրեն, իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ Լ. Ա. Ղազանչյան

26 Հոկտեմբեր 2020թ.

Առաջատար կազմակերպության կարծիք
Զանդուբան Զաուր Աուէսի

«ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ» թեմայով

ԺԲ.00.02- Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Ռուսաստանի Դաշնությունում դատական որոշումների բողոքարկման իրավունքի սահմանադրաիրավական հիմքերի հետ կապված համալիր հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Քննարկվող ատենախոսական հետազոտության արդիականությունը հիմնված է ժամանակակից Ռուսաստանում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմնախնդրի սրության վրա և կապված է վերջին ժամանակներում դատական համակարգում տեղի ունեցող բարեփոխումների հետ:

Ատենախոսական հետազոտության օբեկտ է հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են դատական բողոքարկման սահմանադրական իրավունքի և Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության

118-րդ հոդվածով նախատեսված ճյուղային իրավունքների սահմանադրական, քրեական, քաղաքացիական և վարչական դատավարության միջոցով իրականացման ընթացքում:

Գրախոսվող ատենախոսական հետազոտության առարկա է հանդիսանում Ռուսաստանի Դաշնությունում դատական բողոքարկման իրավունքի իրականացման սահմանադրաիրավական հիմքերը և քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող Ռուսաստանի Դաշնության օրենսդրության սահմանադրաիրավական և այլ նորմերը:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքի նպատակն է հանդիսնում դատական բողոքարկման իրավունքի էության սահմանադրական իրավունքի շրջանակներում գիտական հիմնավորումների հետազոտությունը և նշված իրավունքի իրականացման քաղաքացիաիրավական տեսանկյունների բացահայտումը:

Քննարկվող ատենախոսական աշխատանքի խնդիրներն են՝

1. մարդու և քաղաքացու դատական բողոքարկման սահմանադրական իրավունքի բնույթի սահմանումը.
2. դատական բողոքարկման իրավունքը՝ որպես դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնական տարրի դիտարկումը.
3. արդարադատության սահմանադրական երաշխիքների ընդհանուր հասկացության հետազոտումը.
4. վերաքննությունը և վճռաբեկությունը՝ որպես դատական բողոքարկամ իրավունքի իրականացման գործիքի դիտարկումը.
5. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի օրինակով միջազգային դատական մարմինների որոշումների և Ռուսաստանի Դաշնությունում դրանց կիրառելիության խնդիրների վերլուծությունը
6. դատական պաշտպանության իրավունքը իրացնող ներպետական ինստիտուտների վերլուծությունը

Ներկայացված ատենախոսական աշխատանքի ուսումնասիրությունից կարելի է եզրահանգել, որ հեղինակը պատշաճ գիտական խորհությամբ է լուծել իր առջև

դրված խնդիրները, իսկ հետազոտության արդյունքների հիման վրա մշակված հետևությունները և եզրակացությունները տրամաբանորեն փաստարկված են և գիտականորեն հիմնավորված:

Հետազոտության հիմքում դրված են մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավական ակտերը, Ռուսաստանի Սահմանադրությունը, Ռուսաստանի Դաշնության գործող դաշնային օրենսդրությունը և սուբյեկտների օրենսդրությունը, Ռուսաստանի Դաշնության սուբեկտների պետական իշխանության մարմինների նորմատիվ իրավական ակտերը, մի շարք արտասահմանյան երկրների սահմանադրությունները և այլ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև հետազոտության թեմային վերաբերող ուժը կորցրած ռուսական նորմատիվ իրավական ակտերը և տեղեկագրական բնույթ ունեցող նյութերը:

Գրախոսվող հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ անցկացված գիտական հետազոտության արդյունքում առաջարկված է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի, դրա իրականացման սահմանադրական երաշխիքների վերաբերյալ և դատական բողոքարկման իրավունքը կարգավորող մի շարք ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հեղինակային մոտեցում:

Հեղինակի կողմից ստացված նոր գիտական արդյունքները և մեթոդաբանական հիմնավորումները ունեն գիտագործնական արժեք և բովանդակում են համակարգային առաջարկներ Ռուսաստանի Դաշնությունում դատական բողոքարկման իրավունքը կարգավորող Ռուսաստանի օրենսդրության սահմանադրաիրավական նորմերի կիրառության վերաբերյալ:

Քննարկվող ատենախոսության հետազոտության արդյունքները կարող են կիրառվել մի շարք հատուկ դասընթացների դասավանդման ժամանակ, այդ թվում «Ռուսաստանի Դաշնությունում սահմանադրական իրավունք» և այլն: Դրական գնահատելով կատարված աշխատանքը, այդուհանդերձ ունենք հետևյալ նկատառումները.

Առաջին, աշխատանքում դրված խնդիրները,ընդհանուր առմամբ, համանման են հետխորհրդային մյուս դատաիրավական համակարգերին, ուստի աշխատանքը բովանդակային առումով ավելի շահեկան կներկայանար, եթե հեղինակը

իրավահամեմատական վերլուծություն անցկացներ նաև մյուս անկախ Հանրապետությունների դատաիրավական նշված հիմնախնդիրների հետ:

Երկրորդ, գտնում ենք,որ աշխատանքում կարելի էր առավել ուշադրություն դարձնել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա, հատկապես այն վճիռների որոնք անմիջականորեն վերաբերում են Ռուսաստանի Դաշնությանը:

Հարկ է նշել, որ վերնշյալ նկատառումները բոլորովին չեն կարող ազդել աշխատանքի դրական արժանիքների վրա:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրած մասնագիտությանը, իսկ սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի 2021 թվականի մայիսի 26-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյան, գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատողներ՝ Ա.Վ.Շուքուրյանը, Ա.Ա.Աբրահամյանը, Բ.Վ.Ղազինյանը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Զանդուբաև Զաուր Աուէսի «Դատական որոշումների բողոքարկման իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը ռուսաստանի դաշնությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական և ավարտուն հետազոտական աշխատանք է, այն լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Կանոնակարգ»-ի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ, իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ.Ստեփանյան